

ՄԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ
XVIII ԴԱՐԻ 40—50-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՇՈՒՇԱՆԻԿ ԽԱՅԻԿՅԱՆ

Իրենց դարավոր նախապատմությունն ունեցող առևտրական ընկերությունները (կոմպանիա) բուռն զարգացում ապրեցին հատկապես զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի եվրոպական երկրներում, առաջին հերթին Իտալիայի արդյունաբերական նշանավոր կենտրոններում՝ Վենետիկում, Ֆլորենցիայում և Ճենովայում, որոնք XIII—XIV դդ. դարձան մանուֆակտուրային արդյունաբերության և միջազգային ապրանքափոխանակության խոշորագույն կենտրոններ։ Քիչ անց նման կազմակերպություններ երևան եկան նաև հարավային Ֆրանսիայում, Հոլանդիայում, Գերմանիայում և այլուր¹։

Ընկերությունների կազմակերպչական հիմքերը խարսխված էին դարավոր ավանդույթներ ունեցող ընտանեկան հարաբերությունների վրա։ Դրանք մեծ մասամբ միավորում էին ամենամերձավոր ազգականներին, որոնք ի մի էին բերում իրենց կապիտալները և առևտրավաշխառուական գործունեություն ծավալում ընտանիքի ավագ անդամի՝ հոր կամ ավագ եղբոր գլխավորությամբ։ Խոշոր ընկերությունների շուրջ համախմբվում էին ավելի նվազ տնտեսական կշիռ ունեցող ընկերությունները։

Նույնատիպ ընկերություններ գոյություն են ունեցել նաև արևելյան մի շարք երկրներում, որոնց թվում և Հայաստանում։ Անդրադառնալով զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների բազմազան երևույթներին, մեծանուն պատմաբան Ա. Հովհաննիսյանը ուշադրություն է դարձրել XIII դ. Հայաստանի տնտեսական պատմության մեջ մեծ դեր կատարած Տիգրան Հոնենցի, Սահմադիհի, Կարինից հյուսիսային Հայաստան ներգաղթած մեծահարուստ վաճառական Ումեկի ու նրա գերդաստանի անդամների գործունեությանը և կարծիք հայտնել այն մասին, որ, հավանաբար, հայկական միջնադարյան քաղաքներում ևս գոյություն են ունեցել այդպիսի ընկերություններ²։ Այդ մասին ավելի որոշակի վկայություններ կան XVII դ. հայկական աղբյուրներում, մասնավորապես Զաքարիա Ազուլեցու

¹ Д. Ж. Луццато, Экономическая история Италии (Античность и средние века), М., 1954, с. 365, 373—374, 379; В. И. Рутенбург, Очерк из истории раннего капитализма в Италии, М.—Л., 1951, с. 31—48; Н. В. Савина, Два типа купеческих компаний Южной Германии на рубеже XV—XVI вв. («Средние века», № 37, 1937, с. 256—270); А. К. Дживелегов, Средневековые города в Западной Европе, СПб., 1902, с. 160.

² Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Երևան, 1957, էջ 219, Ա. Հովհաննիսյան, Ֆրիդր պատմաքննական լուսի տակ, Երևան, 1955, էջ 21.

«Օրագրություն»³ մեջ, Զաքարիա Քանաքեռցու Պատմության էջերում⁴ և այլ աղբյուրներում⁵։ Համախմբելով այդ նյութերը, կարելի է հանգել այն եզրակացության, որ հայկական առևտրական ընկերություններ գոյություն ունեին ինչպես պատմական Հայաստանի տնտեսական նշանավոր կենտրոններում (Երևան, Նախիջևան, Ագուլիս, Ցղնա, Շոռոթ, Վան, Բաղեշ, Կարին, Երզնկա և այլն), այնպես էլ Անդրկովկասի, Իրանի և Թուրքիայի բոլոր այն քաղաքներում (Թբիլիսի, Շամախի, Թավրիզ, Համադան, Բասրա, Հալեպ, Թոխաթ, Զմյուռնիա, Տրապիզոն և այլն), որտեղ հայ առևտրական կապիտալը կամ հրամանատարական բարձունքներ էր գրավել, կամ էլ կատարում էր կարևոր դերերից մեկը։ Այս տեսակետից ուշագրավ են Նոր Զուղային վերաբերող նյութերը։ Զուղայեցի հայ վաճառականների հաշվեմատյանների, պաշտոնական թղթակցությունների, կտակների, պարտամուրհակների և համանման այլ ձեռագրական աղբյուրների մեջ կան մեծաքանակ և արժեքավոր տվյալներ, որոնք ավելի լայն հնարավորություններ են տալիս ուսումնասիրելու հայկական առևտրական ընկերությունների կազմակերպչական սկզբունքները, գործունեության բնագավառները և դրանց հետ առնչվող սոցիալ-տնտեսական այլ հարցեր։

Նոր Զուղայի տնտեսական կյանքում XVII—XVIII դդ. ընթացքում խոշոր դեր են կատարել հատկապես Սաֆրազյան (Շահխասենց), Շահրիմանյան, Գերաքյան, Խալդարյան, Թոփչյան, Լուսիկենց և աշխարհատարած իրենց կապերով հայտնի այլ առևտրական գերդաստաններ։ Նրանց շարքում XVII դ. վերջերին և XVIII դ. առաջին հիսնամյակում պատվավոր տեղ են գրավել նաև Լազարյանները։

XVIII դ. 70-ական թվականներին, երբ Լազարյանները Ռուսաստանում բարձր դիրքի էին հասել և հսկայական միջոցներ կուտակել, ռուսական պետական մարմիններին ներկայացրել էին վրաց Թելմուրազ թագավորի և հայոց կաթողիկոսի կողմից վավերացված մի վկայագիր այն մասին, որ իրենք սերված են «ի տոհմէ թագաւորացն Հայոց» և որ իրենց հեռավոր նախնիները եղել են «ստիրապետողք միոյ մասին Հայաստանի»։ Ասված է նաև, որ նրանց նախապապերից մեկը եղել է «Պարսկաստանի փողերանոցի առաջին կառավարիչ և գանձապետ» և այլն։ Հավատ ընծայելով պատմական փաստերով չհիմնավորված այս հայտարարություններին, որոշ ուսումնասիրողներ անհաջող փորձեր են կատարել նրանց պատմության դրվագները և տոհմածառը վերականգնելու ուղղությամբ⁶։

Որոշ հիշատակարանների, վիճաբանական ու ձեռագրական նյութերի հիման վրա կարելի է վստահորեն հանգել այն եզրակացության, որ Լազարյանների գերդաստանն իր ազգանունը ստացել է XVII դ. կեսերին Սպահանի Շամսաբադ թաղամասից Նոր Զուղայի Դաշտ թաղամասը փոխադրված վաճառական Աղազարից, որի նախնիները, մեծ հավանականությամբ, եղել են հին

³ Ճաքարիա Ագուլեցու Օրագրությունը, Երևան, 1938, էջ 72—73։

⁴ Ճաքարիա սարկաւագի Պատմաբրութիւն, հ. երկրորդ, Վաղարշապատ, 1870, էջ 131—133։

⁵ Հ ա կ ո Ր Վ. Ք ո ս յ ա ն, Հայք ի Զմիւռնիայ և շրջակայս, Վիեննա, 1899, էջ 43, Վ. Մ. Մ ա ր տ ի Ր ո ս յ ա ն, Հայերի առևտրական գործունեությունը Քարթլ-Կախեթի թագավորությունում (XVIII դ. երկրորդ կես) (ՀՍՍՀ ԳԱ տրաքեր, 1974, № 11, էջ 65—72)։

⁶ Մ. Մ ս ե Ր յ ա ն ց, Հիշատակարան կենաց և գործոց մեծանուն պայագատաց Լազարյան տոհմի, մասն 2-րդ, Մոսկվա, 1856, էջ 1—2, Յ ա ր ու թ իւ ն Տ է Ր-Ց ո վ հ ա ն ե ա ն ց, Պատմութիւն Նոր Զուղայու որ յԱսպահան, հ. Ա, Նոր Զուղա, 1880, էջ 94—97։

նախիջևանցիներ, Այս Աղազարի որդիներից է եղել Նազարեթը (ծնվ. մոտավորապես 1670 թ.—մ.ց. 1744 թ.), որն ունեցել է 3 որդի՝ Աղազար (1700—1782 թթ.)⁷, Մանուկ (մ.ց. 1746 թ.) և Հարություն:

Նազարեթի ու նրա որդիների գործունեության մասին պահպանվել են արժեքավոր սկզբնաղբյուրներ՝ Հարություն Լազարյանի հաշվեմատյանը⁸, նույնի 1744—1745 թթ. Մոսկվայից գրած 100-ից ավելի նամակների սևագիր օրինակների ժողովածուն⁹, ինչպես նաև Լոնդոնում պահվող հայերեն փաստաթղթերից մի քանիսը¹⁰, Դրանք հնարավորություն են ընձեռում հետևելու Լազարյանների տնտեսական գործունեությանը XVIII դ. 40—50-ական թվականների ընթացքում: Այդ ժամանակաշրջանում ընկերության մեջ Նազարեթի գլխավորությամբ ընդգրկված են եղել նրա որդիները: Հարությունի վերոհիշյալ նամակների մոտ 10 %-ը հասցեագրված է իր «սահիպ աղայ» հորը՝ Նազարեթին: Այդ նամակներից մեկում Հարությունը դժգոհություն է հայտնում շատ ծանրաբեռնված լինելու համար: Նշելով, որ իրենց առևտրական գործերը Գիլանում վարելու համար երեք հոգին՝ Մանուկ եղբայրը, Սեթի որդի Հարությունը և պարոն Փանոսը շատ են, նա խնդրում է հորը վերջին երկուսից մեկին ուղարկել Մոսկվա՝ իր գործը թեթևացնելու համար: Մեկ ուրիշ նամակով նա առաջարկում է Ռեշտում պահել Փանոսին ու Հարությունին, Մանուկ եղբորն ուղարկել տուն՝ Նոր Զուղա, իսկ Աղազարին՝ Ռուսաստան: Այս տվյալներից էլ պարզ երևում է, որ Լազարյանների ընտանիքի ավագ անդամ Նազարեթի կամքով էին տնօրինվում ընկերության գործունեության համար կարևոր նշանակություն ունեցող բոլոր խնդիրները: Հիշատակելի է նաև Հարությունի հաշվեմատյանի գրանցումներից մեկը՝ երկու տարբեր անձանց տրված 350 թուման վարկի և այդ մասին առկա փաստաթղթի («ընկերագիր») մասին, որ գրված է եղել «մեր սահիպ խօր (Նազարեթի—Շ. Խ.) և 3 ախօր անձան»¹¹, Ըստ այդմ, որպես Լազարյանների ընկերության անդամներ հանդես է գալիս Նազարեթը՝ իր երեք որդիների հետ միասին: Նազարեթի մահից հետո նրա տեղը, ըստ գոյություն ունեցող կարգի, գրավել է ավագ որդին՝ Աղազարը: 1745 թ. Նադիր շահի հրամանով նոր ջուղայեցիներից բռնագանձվել է մի խո-

⁷ Աղազարի որդիներն են Լազարյան նշանավոր իշխաններ Հովհաննեսը (1735—1801), Մինասը (1737—1809), Խաչատուրը (1741—1774) և Հովակիմը (1743—1826), որոնք մեծ դեր են կատարել Ռուսաստանի տնտեսական կյանքում և նպաստել են պարսկական լծից Արևելյան Հայաստանի ազատագրվելու գործին և այլն: Սրանց մասին տե՛ս Վ. Ա. Դիլիջան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966, էջ 23—24, Գ. Ա. Չերնյավսկայա, К истории возникновения капиталов и горнозаводского хозяйства Лазаревых («Исторические записки», № 105, М., 1980, с. 273—279):

⁸ Մատենադարան, Արխիվային րաժին, Լազարյանների ֆ., թղթ. № 101, վավ. № 1 (այսուհետև՝ Հարություն Լազարյանի հաշվեմատյան):

⁹ Մատենադարան, ձեռ. № 6240:

¹⁰ Խոսքը Բրիտանական թանգարանի Lansdowne 1047 և 1048 համարների տակ պահվող փաստաթղթերի մասին է. տե՛ս «A catalogue of the Armenian manuscripts in the British Museum». By Frederic Cornwallis Conibear, London, 1913, p. 352—353; Գ. Տեր-Գրիգորյան, Հայկական հին ձեռագրերի լոնդոնի բրիտանական թանգարանում («Բազմավեպ», 1913, էջ 3—7), (այսուհետև՝ Բրիտանական գրադարան):

¹¹ Հարություն Լազարյանի հաշվեմատյան, էջ 14:

շոր գումար՝ 60.500 նադիրի: Գումարի մեծ մասը մուծել են այդ օրերին Ջուղայում գտնվող մեծածախարուստ 10 խոջաներ: Պահպանվել է այդ խոջանների անվանացանկը, որի մեջ հիշատակված են Աղազար անունով երկու անձնավորություններ: Դրանցից մեկը մուծել է 5000 նադիրի, այսինքն նույնքան, որքան մուծել էին միայն Շահրիմանյանները, իսկ մյուս Աղազարը՝ 1500 նադիրի (6 ուրիշ խոջանների մուծածի շափ)¹²: Նշված Աղազարներից մեկը Նազարեթի որդին է եղել և մենք հակված ենք կարծելու, որ այն հենց առաջին Աղազարն է: Ի հաստատումն այս ենթադրության, վկայակոչենք 1747 թ. սեպտեմբերի 25-ին Ամենափրկիչ վանքի հոգաբարձու Պողոս վարդապետի և նրա փոխանորդ Գևորգ վարդապետի նամակը՝ հասցեագրված Հնդկաստանում հաստատված մեծածախարուստ վաճառական Հովակիմին: Նամակով ծանուցվել է, որ Նադիր շահի մահից հետո ջուղայեցիների վիճակը փոքր-ինչ բարվոքվել է և իրենք լավատես են ապագայի նկատմամբ: Շատ կարևոր տվյալներ պարունակող այդ գրությունն իրենց ստորագրություններով ու կնիքներով հաստատել են Նոր Ջուղայի ամենանշանավոր մի քանի ընկերությունների ներկայացուցիչներ. նախ Քալանթարը՝ Սարգսի որդի Ավետը, ապա 8 նշանավոր ջուղայեցի վաճառականներ, որոնց շարքում նաև Նազարեթի որդի Աղազարը¹³: Այս Աղազարը պետք է շատ հեղինակավոր ու ճանաչված դեմք լիներ Նոր Ջուղայում և նրա հետ սերտորեն կապված մյուս հայկական գաղթօջախներում, որպեսզի նրա վկայությունն անհրաժեշտ համարվեր պատասխանատու այդպիսի մի գրության վավերացման համար: Իսկ այն ժամանակների խոջայական միջավայրում հեղինակության կայուն երաշխիքը հարստությունն էր՝ կուտակած կապիտալի շափը: Այս տվյալները թույլ են տալիս եզրակացնելու, որ XVIII դ. 40-ական թվականներին Նոր Ջուղայի ամենափարթամ ու ազդեցիկ ընտանիքների շարքում Լազարյանների գերդաստանը պատվավոր տեղ էր զբաղում: Հայտնի է, որ Նազարեթն ու նրա որդիները սերտ կապեր են ունեցել Գիլանի և Աստրախանի ուսումնական թաղամասերի հետ¹⁴:

Մինչև Ռուսաստան փոխադրվելը Աղազարը գործել է Նոր Ջուղայում և ջուղահայ մյուս մեծատուն վաճառականների նման, առևտրական կապեր է

12 Ցարութիւն Տէր-Յովհաննես, նշվ. աշխ., էջ 250—251: Վերը հիշատակված են Թովմե, Ռադիբ, իսկ քիչ հետո նաև Ռաֆի գրամական միավորները: Դրանց կշռային չափերն այդ ժամանակաշրջանում համապատասխանաբար համարժեք են. Թովմե (10.000 դրան)՝ 230 գ արծաթի, Ռադիբ՝ 11,53 գ արծաթի, Ռաֆի՝ 11,33 գ արծաթի:

13 Բրիտանական գրադարան, ձեռ. № 1048, էջ 175:

14 Հետաքրքրական է. որ Սպահանում Աղազարի գնած 13,75 կարատանոց մի մեծ ադամանդը Նազարեթի 1744 թ. վաճառել է Աստրախանի նահանգապետ՝ նշանավոր ուսումնական Վ. Տադիշևին, որն իր աշխատությունների մեջ անգրադարձել է նաև հայոց պատմության հարցերին: Հարությունի հաշվեմատյանում այդ մասին գրված է. «Եւսպանահայ պարոն Աղազարն մին դանայ կանաչափուն ալմազ էր առել, աղարկել Գիլան՝ Մանուկաղէ, որ քաջն էր 133/4 դիրէթ, առքն էր գրէլ աճիւն (147) թուման, որ վերոյ այմազն Մանուկ աղէն մեր խօր լետ աղարկէլ էր Աշտարխան... մեր սահիպ խէրն, որ խտուրն բերէլ էր Աշտարխան ծախել այ գուրեհնաթի վասիլ Նիկիտիշ Թաթիշովին, էճիօ (720) թուման բուսիի էր յինք առէլ:» (Հարություն Լազարյանի հաշվեմատյան, էջ 47): Մատյանի տարբեր էջերում հիշատակված են նաև մի շարք այլ տեղեկություններ խոջոր ադամանդների (22,25 կարատ, 16 կարատ և այլն) արտահանման և վաճառքի մասին, Լազարյանների հետ է առնչվում նաև ժողովրդականությունը հայտնի ադամանդը (1343/4 կարատ), վաճառված նրանց կողմից 1773 թ., որն այժմ պահվում է Կրեմլի Զինապալատում (А. П. Б а з я я н ц, Правда интереснее легенд, М., 1975, с. 53—73):

ունեցել Հնդկաստանի, Թուրքիայի և Ռուսաստանի հետ՝ զբաղվելով հիմնականում թանկագին քարերի առևտրով¹⁵։ Աղազարը, իր օղբայրների հետ միասին, կատարել է նաև դրամական զանազան գործարքներ, զբաղվել վաշխառությամբ։ Պահպանվել է Սուլթանումի որդի Շահամիրի ստորագրած մի գրույթյուն այն մասին, որ ինքը պարտավորվում է նազարեթի որդի Աղազարին վճարել իր մոր՝ Անամի, վեցրած 6808 ռուբլի դրամը¹⁶։ Նույնպես գործունեություն է ծավալել նաև Մանուկ Լազարյանը։ 1740-ական թվականներին հաստատվելով Գիլանում, նա մեծ դեր է կատարել Իրանի և Ռուսաստանի տնտեսական կապերի սերտացման բնագավառում։ Նրա ծառայությունները բարձր են գնահատվել Իրանում գտնվող ռուս պաշտոնյաների, մասնավորապես ռեզիդենտ Վ. Ֆ. Բրատիշչևի կողմից¹⁷։

Լազարյանների առևտրական ընկերության մեջ մինչև 1744 թ. (նազարեթի մահը) ընդգրկված էին գերդաստանի հայրը՝ ընկերության ղեկավար Նազարեթը, իր երեք որդիների հետ։ Նրանցից յուրաքանչյուրը, սակայն, ընկերության կապիտալի մեջ իր բաժինն ունենալուց բացի, ունեցել է նաև սահմանափակ դրամական միջոցներ։ Դրանք կուտակվում էին տարբեր աղբյուրներից։ Ընկերության շահույթի մասնահատումներից, ինքնուրույն ծառայություններով վաստակած գումարներից, կնոջ օժիտից և այլ աղբյուրներից։ Նոր շուղայեցիների միջավայրում այդ գումարները կոչվում էին «անալմալ»։

Լազարյան եղբայրները, լինելով միևնույն առևտրական ընկերության լիիրավ անդամներ, 1741 թ. ստեղծում են մի նոր հիմնադրամ՝ Ֆոնդ (Հարությունը գրում է «փունթ»), միավորելով իրենց «անալմալ» կապիտալները։ Ավագ եղբայր Աղազարը Ֆոնդ է մուծում 1000 թուման, Մանուկը՝ 900, իսկ Հարությունը՝ 670։ Ըստ այդմ էլ, Աղազարը հիմնադրամի, ուստի և շահույթի 39 %-ի տերն էր, Մանուկը՝ 35 %-ի, իսկ Հարությունը՝ 26 %-ի¹⁸։

Ըստ գոյություն ունեցող կարգի, Ֆոնդ ստեղծած եղբայրները համապատասխան հաշվեմատյաններ են պահել, ուր գրանցել են այդ հիմնադրամի հետ առնչվող առևտրական ու վաշխառական բոլոր գործարքների մասին հաշվապահական տվյալներ։ Մեզ հասած մատյանը Հարությունի կազմած հաշվեմատյանն է, բայց նրա մեջ կան արժեքավոր գրանցումներ, որոնք հնարավորություն են տալիս ծանոթանալու նաև մյուս եղբայրների գործունեության որոշ կողմերին։ Հատկապես ուշադրության են արժանի այն բազմաթիվ գրանցումները, որոնք ծանուցում են որևէ առևտրական գործարքից ստացված շահի կամ գնվող ապրանքի ամբողջ քանակի՝ երեք բաժին («սամ») լինելու փաստը։ Ընդ որում, այդ երեք բաժնից երկուսը, ըստ գրանցումների, պատկանելիս են եղել Ֆոնդի անդամներին (նրանց մուծած դրամագլխի համամասնությամբ), իսկ մեկ բաժինը՝ եղբայրներից միայն Մանուկին («մին սամն Մանուկ աղին այ»)։ Սա նշանակում է, որ Լազարյան եղբայրներից յուրաքանչյուրը, տվյալ դեպքում Մանուկը, բացի Լազարյանների ընկերության լիիրավ անդամը և Լազարյան եղբայրների ստեղծած Ֆոնդի կապիտալի

¹⁵ Հարություն Լազարյանի հաշվեմատյան, էջ 47։

¹⁶ Բրիտանական գրադարան, ձեռ. № 1047, էջ 164։

¹⁷ Մատենադարան, ձեռ. № 6240, էջ 126ա—126բ։

¹⁸ Հարություն Լազարյանի հաշվեմատյան, էջ 6։

¹⁹ Նույն տեղում, էջ 24, 30, 31, 47 և այլն։

35 %-ի տերը լինելուց, ունեցել է նաև սեփական դրամագլուխ (առնվազն 1250 թուման), որով ինքնուրույն առևտուր է արել: Կարելի է ենթադրել, որ այդպիսի դրամագլուխ ունեցել են նաև Լազարյան մյուս եղբայրները, ինչպես և Նոր Զուղայի առևտրական գերդաստանների անդամներից շատերը:

Հաշվեմատյանը միաժամանակ հարուստ մի շտեմարան է, որը հնարավորություն է տալիս պարզելու, թե XVIII դ. 40—50-ական թվականներին Իրանից ինչ էին արտահանում Ռուսաստան և եվրոպական երկրներ, ինչպես նաև ինչ էին ներմուծում այդ երկրներից: Լազարյանները Իրանից արտահանում էին հիմնականում թանկագին քարեր՝ ադամանդ, մարգարիտ, հակինթ (հատկապես կարմիր), լալ, մարջան, ղմրուխտ և այլն: Մետաքսի հումքը նույնպես կարևոր տեղ էր բռնում արտահանման մեջ: 1741—1759 թթ. ընթացքում, ըստ հաշվեմատյանի տվյալների, Լազարյաններն արտահանել են մոտ 10 տ մետաքսի հումք, ինչպես նաև տարբեր տեսակի մետաքսյա և բամբակյա դործվածքներ (թափտա, չիթ, կտավ), գորգեր, արևելյան համեմունք (դարչին, հիլ, մեխակ), ծխախոտ և այլն, իսկ Ռուսաստանից Իրան են ներմուծել հիմնականում թանկարժեք մորթեղեն, Հոլանդիայից՝ մահուդ, ժանյակ, լեղակ, վառ կարմիր ներկ (կարմին), ժամացույցներ, ակնոց, հայելի և այլ կենցաղային, մանր արդյունաբերական ապրանքներ (մկրատ, դանակ, մատոնոց, ասեղ և այլն):

Լազարյանների մասին պահպանված սկզբնաղբյուրները թույլ են տալիս նաև աճելի մանրամասն անդրադառնալու ինչպես խոջայական տարբեր գերդաստանների միջև գոյություն ունեցող տնտեսական կապերին, օտարերկրյա առևտրական կապիտալի ներկայացուցիչների դեմ միացյալ ուժերով հանդես գալու անհրաժեշտության կոնկրետ դրսևորումներին, այնպես էլ ներքին մրցակցության, իրար դեմ խարդախանքներ նյութելու, մեկը մյուսի հաշվին շահվելու փաստերին:

Խոջայական կապիտալի ներկայացուցիչները քաջ գիտակցում էին, որ իրենց շահերը միահյուսված են: Երբ 1739 թ. անգլիացիները բռնագրավեցին ջուղայեցիների ապրանքով բեռնված «Սանտա Կատարինա» նավը, Զուղայի մեծամեծները հատուկ գրությամբ դիմեցին Վենետիկում և Ամստերդամում գտնվող իրենց հայրենակիցներին՝ պարտավորեցնելով վճռական քայլերի դիմել ապրանքը վերադարձնելու կամ դրամական փոխհատուցում ստանալու համար: Այդ կարևոր շրջաբերականում իրենց շահերի միասնության մասին նրանք գրել են՝ «Զերայ ձեր շարմն մերն այ, մեր շարմն ձերն այ», և շեշտել, որ իրենք չպետք է թույլ տան անգլիացիներին իրենց վրա ծիծաղել, ջուղայեցիների շահերը ոտնահարել (սթողման չենք, որ ինկլիզանին մեր վերայ ծիծաղեն)²⁰: Այս դեպքերից մի քանի տարի հետո՝ 1744 թ., Մոսկվայում գտնվող Հարություն Լազարյանը լուր է ստանում, որ Գիլանում անգլիացիները մեծ վնաս են կրել, նրանց հասանելիք դրամը բռնագրավել է տեղի իշխանավորը և այլն. «էնպէս որ... 4 և 5 հազար թումանի դարար այ ելէն»: Այդ լուրն անմիջապես, որպես ալքալուսանք (սաղիտ լուս) բառերով սկսելով իր շարադրանքը, Հարությունը հաղորդում է Ամստերդամում հաստատված Հովհանն Խալդարյանին և նրա միջոցով Հոլանդիայի հայ գաղթօջախի բոլոր անդամներին: Նա հայտնում է, որ ռուսների հետ անգլիացիների կնքած պայ-

20 Բրիտանական դրադարան, ձեռ. № 1046, էջ 153:

որէնք օրդնուն խասացանեմ»²⁵։ Այս դիմումների կապակցությամբ նա հայտնում է իր համաձայնությունը՝ հնարավորին չափով օգտակար լինելու Շահրիմանյաններին, նշելով որ «պարտականութիւն ունեմք միմեանց խէրիաթին հետեւել» և ակնարկելով նաև իրենց միջև ազգակցական ինչ-որ կապի մասին²⁶։

Հարությունը, բնականաբար, հոր և եղբայրների հանձնարարությամբ և համաձայնությամբ ծառայություններ է կատարել նաև Խալդարյան գերդաստանի խոշա Մինասենց ճյուղի առևտրական ընկերության անդամների համար, որոնք XVIII դ. 40-ական թվականներին խոշա Մինասի էմինիազ որդու անունով կոչվում էին նաև էմինիազներ։ Մի կապակցությամբ նա գրում է, որ «պարտէ էմինիազէնց մին դանայ ալմազն մին դօստ մեծամարդի ձեռնով տարանք դագհուին (Նիզավանտ Պետրովնան—Շ. Խ.) տեսալ. քարեղէնն ողջ յինք առէց. գներն էլ թասֆիլ գրեցի» տվի. մնացել այ մինչև ի հօրս դագավորին քշտին այ թամամ ալմազանին» և այլն²⁷։ Մեկ ուրիշ տեղ էլ հայտնում է, որ «աղայ պարոն էմինիազենց մարգարիթն... ծախել ի քնազ Բարաթինցկուն, որ Աշտարխանայ վիսգուբըռնաթն է»²⁸։

Լազարյաններն առևտրական սերտ կապերի մեջ են եղել նաև ոմն պարոն Սուլթանումի և պարոն Մարտիրոսի հետ։ Նամակներից մեկում Հարությունը, հատկապես նշելով այն դժվարությունները, ինչպես նաև նյութական վնասները, որ ինքը կրում է ուրիշների ապրանքների վաճառքը Մոսկվայում կազմակերպելիս, հայտնում է, որ այսուհետև կատարելու է միայն վերոհիշյալ անձանց այդ կարգի հանձնարարությունները, իսկ մյուսներին կամ մերժելու է, կամ էլ՝ «պրովժոն» պահանջելու (ըստ երևույթին «ПРОВЭЖОН» բառի աղ-ճատ գրությունն է, որ այս պարագայում նշանակում է աշխատավարձ)²⁹։

Ինչպես տարբեք խոշայական գերդաստանների անդամները Հարությունին էին դիմում, երբ ապրանք էին արտահանում Մոսկվա կամ էլ Մոսկվայի վրայով Նվրոպա, այնպես էլ Լազարյաններն էին օգտվում Իրանից Նվրոպա ձգվող ժովային ու ցամաքային ճանապարհների բոլոր հանգուցակետերում՝ Ռեշտում, Դերբենտում, Աստրախանում, Մոսկվայում, Պետերբուրգում, Ամստերդամում և այլ կենտրոններում հաստատված հայ վաճառականների ծառայություններից։ Ընդ որում, Լազարյաններին հաջողվել էր բոլոր այդ վայրե-

²⁵ Նույն տեղում, էջ 59ա—59բ։

²⁶ Նույն տեղում, էջ 101բ։ Մեկ այլ նամակում, ուղղված Պետերբուրգում գտնվող իրենց գործընկեր Ղուկասին, նույն հարցի մասին Հարությունը գրում է. «Ըլդայ վեր ան կացի (խոսքը Շահրիմանյան պարոնների մասին է) բանգիս (այսինքն՝ Հարությունին) գրում ան. վասն Քրիստոսի սէրն՝ մերն ջարմն պախիր մեր աղրկած ապրիշումին ֆիքրն առն» դնայ Պետրոսը և Յոանկըստանայ ինչ ապրանք որ գոյ՝ սարանչամն տամ, ազարկեմ մեր երկիրն՝ ուրէնց խասանի...» և այլն (նույն տեղում, էջ 50ա)։

²⁷ Նույն տեղում, էջ 28բ։ Թագուհուն վաճառքի առաջարկված այդ աղամանդների մասին նամակների մեջ կան բազմաթիվ այլ գրանցումներ։ Ի վերջո, այդ վաճառքը չի կայանում և աղամանդները Հարությունն ուղարկում է Ամստերդամ։

²⁸ Նույն տեղում, էջ 31բ։

²⁹ Հարությունը գրում է. «Եթէ ուրիշնոցն հեփ առնմ՝ պրովժոն կու դնեմ, որպէս աստուծոյ ճանապարտան ա՝ ճշմարտութեամբ պրանն կառնեմ. իմ աղայ (նամակը հասցեագրված է պարոն Նուլթանումին), հրամանույտ էլ այ հայտնի, մեզ տարին մասլազ մարաֆ խալչ է գնաման, ողջ էլ փող այ. եթէ գնամ հայասայի վեռում, խէլ կասեն ուր լայնդաթում բան չէ արարել, թէ չլիւռուք՝ մեզ դարար գնի. էլ լէվն էն այ՝ մոնչ առնք, մոնչ դարարվնք, ոչ թօմաթ լսենք» (նույն տեղում, էջ 24բ)։

նենցնելու համար: Յոթ տարի հետո, երբ նրանք ընդհանուր հայտարարի են բերել իրենց հաշիվները, Հարությունից ստացել են 45 թումանը և այդ գումարի շահը՝ 33,3 թուման (333 ուրբի): Ըստ այդմ, տրված գումարը տարեկան 10 %-ից ավելի շահ է բերել³⁴: Փանոսի հետ ընկերանալու մասին ևս կան արժեքավոր տվյալներ. նա 1741 թ. Ռեշտում Լազարյան եղբայրների ֆոնդից ստացել է 450 թուման վարկ, իր կողմից ավելացրել՝ 170 թուման և առևտրական գործունեություն ծավալել այդ գումարով³⁵: Փանոսը բազմիցս հիշատակվում է Լազարյանների գրագրությունների մեջ, որպես նրանց ֆոնդի հետ կապված ու նրանց բազմապիսի հանձնարարությունները կատարող վաճառական³⁶:

Այս նշանավոր գործընկերներից բացի, Լազարյանները մեծ ու փոքր գումարներով վարկավորել են բազմաթիվ (առնվազն երկու տասնյակ) այլ վաճառականների, որոնք առևտուր են արել ինչպես Իրանում, այնպես էլ Ռուսաստանում, Իրաքում, Հնդկաստանում, գուցե և այլ երկրներում: Ստույգ տեղեկություններ կան, օրինակ, նրանց հետ կապված հետևյալ վաճառականների մասին:

1. Ղազվինցի Մաթոսի որդի Ավետ, որին 1741 թ. Ռեշտում տվել են 45 թուման վարկ, իսկ հաջորդ տարի՝ 90 թուման³⁷:
2. Նազարի որդի Դավիթ, որին 1742 թ. տվել են 350 թուման վարկ³⁸:
3. Վրացի կամ Վրաստանի հայ՝ Մամուկի որդի Դիմիարի, որին 1745 թ. վարկավորել են 56, իսկ երկու տարի անց՝ 100 թումանով³⁹:
4. Անդրեասի որդի Մովսես, որին 1745 թ. վարկավորել են 180 թումանով⁴⁰:

³⁴ Նույն տեղում, էջ 68:

³⁵ Նույն տեղում, էջ 6:

³⁶ Լազարյանները 1741 թ. և հետագա տարիներին խոշոր գումարներով վարկավորել են նաև Իրանի Ռեշտ քաղաքի ռուսական կոնսուլ Սիմեոն Զախարիչ Արապովին (տվել են նրան նախ 310, ապա 315, իսկ երրորդ անգամ՝ 423 թուման և այլն): Այդ վարկավորումը կատարվել է 29% շահի պայմանով, որը ստացել են նրանց կողմից լիազորված անձինք Աստրախանի «գուբեռնի» կանցլարին, այսինքն՝ զավառական զրասենյակից (նույն տեղում, էջ 10, 16, 19 և այլն):

Հայ վաճառականները ֆինանսական գործարքներ էին կատարում ոչ միայն պետական ամենաբարձր պաշտոնյաների հետ, այլև հաճախ վարկավորում էին նույնիսկ ինքնավար թագավորների: Լազարյանների հաշվեմատյանի մեջ կա մի զրանցում այն մասին, որ 1746 թ. Դավիթ բեկի որդի Գարրիբը վեճի է բռնվել Նազարեթի որդի Մանուկի հետ, նրանից պահանջելով մի պարտամուրհակ (ավեսլայգիր), որի համաձայն Շվեդիայի թագավորը 700 թուման պարտք է ունեցել Նոր Զուղայի Նրեան թագամասի բնակիչ՝ Ոսկանի որդի Ստեփանին. «Դավիթ բեկի որդի Գափրէլն լուսայնոգուցն (այսինքն՝ հանգուցյալ Մանուկից) դառ էր առում, թէ Հարեանցի (երեանցի—Շ. Խ.) Հոսկանի որդի Ըստեփանն շվէթի դազավորին անման մին վեսլայգիր այ ավէլ էճ (700) թումանի» (նույն տեղում, էջ 112): 1746 թ. Մանուկն արգեն մահացած էր: Նրա եղբայր Հարությունը հայտնում է, որ այդպիսի պարտամուրհակ Մանուկի մոտ չի եղել, ուստի վերոհիշյալ Գարրիբի պահանջը՝ պարտամուրհակի վերադարձման մասին, հիմնադրով է: Դա ապացուցելու համար նա ցույցոված է եղել դատ բացել Գարրիբի դեմ և վճարել՝ 3642 ռ. դատական ծախսեր (նույն տեղում):

³⁷ Նույն տեղում, էջ 7, 13:

³⁸ Նույն տեղում, էջ 14:

³⁹ Նույն տեղում, էջ 54:

⁴⁰ Նույն տեղում, էջ 57:

5. Նոր Զուղայի Երևան թաղամասի բնակիչ Աստվածատուրի որդի Մարգար, որին 1753 թ. տրվել է 150 ռուբլի⁴¹:

6. Խաստատենց Ներսեսի որդի Բոգդանուշկային 1754 թ. տվել են 6000 ռուբլի⁴²:

7. Համադանցի Յավրիի որդի Ծսայուն, որին 1755 թ. վարկավորել են 7500 ռուբլով և այլն⁴³:

Այս ցանկը կարելի է եռապատկել՝ լրացնելով հաշվեմատյանի մեջ առկա այլ տվյալներով:

1761 թ. ելիզավետա կայսրուհուն Հարություն Լազարյանի ներկայացրած խնդրագրից տեղեկանում ենք, որ Լազարյանների գործակատարներից երկուսը, իրենց դրամագուլթը չվերադարձրած՝ փախուստի դիմելով, այդ ժամանակ գտնվելիս են եղել Հնդկաստանում և որ նրանց օրինակին հետևելու մտադրությամբ ունի նաև մեկ այլ գործակատար՝ Աբլատենց Ղամազի որդի Հովհաննեսը, որը 1761 թ. գտնվելիս է եղել Բասրայում և ըստ որոշ տեղեկությունների, նախապատրաստվում է փախչելու Հնդկաստան: Լազարյանները խնդրում են ռուսաց կայսրուհուն՝ Թուրքիայում գտնվող իրենց լիազոր-ներկայացուցչի միջոցով պահանջ ներկայացնել թուրքական իշխանություններին՝ այդ գործակատարի փախուստը կանխելու և նրա մոտ գտնվող ու Լազարյաններին պատկանող դրամագուլթը ետ ստանալու մասին⁴⁴:

Լազարյանների առևտրական ընկերության ծառայության մեջ են գտնվել նաև բազմաթիվ պաշտոնյաներ՝ գործակատարներ և նոքարներ (տղաներ)։ Սրանք վարձվել են, սովորաբար, որոշակի ժամանակաշրջանով (մեծ մասամբ մեկ տարով) կամ էլ առևտրական բեռները մեկ վայրից մեկ ուրիշը փոխադրելու ընթացքում ծառայություններ կատարելու համար: Այդ մասին գրվել են համաձայնագրեր, որոնցում մեկ առ մեկ նշվել են վարձկանի պարտականությունները, նրան տրվելիք աշխատավարձը դրամով կամ էլ դրամով և ուտելիք-հագնելիքով («խորակ-փուշակով»)՝⁴⁵: Այս կարգի օժանդակ ծառայողների մասին ևս պահպանվել են արժեքավոր վկայություններ: Հարություն Լազարյանի իր նամակներից մեկում, օրինակ, հայտնում է, որ մի տղա է վարձել, որ Մոսկվայից Պետերբուրգ մեկնող քարավանում հետևի իրենց մետաքսի բեռներին («վոլներին տիրութիւն առի»), և ամռանը Մոսկվա վերադառնա՝ հսկելով Եվրոպայից ստացված ապրանքներին: «Մին տղա էլ Սարաթովու աղարկած ապրանքաց հետ անք աղարկել, որ անումն Աբրահամ այ», — գրում է Հարությունը նույն առիթով⁴⁶:

Զգալի հետաքրքրություն է ներկայացնում 1744 թ. փետրվարի 15-ին ունեցողականին և Աբրահամին տրված հանձնարարական գիրը, որի մեջ մանրամասն նշված են այդ երկու գործակատարների պարտականությունները՝ կապված իրենց ապրանքները Սարատովի վրայով Աստրախան հասցնելու հետ:

⁴¹ Նույն տեղում, էջ 91:

⁴² Նույն տեղում, էջ 100:

⁴³ Նույն տեղում, էջ 104:

⁴⁴ «Армяно-русские отношения в XVIII веке», т. III, Ереван, 1978, с. 340—341.

⁴⁵ Նման պարտավորագրերի մասին բազմաթիվ տեղեկություններ կան Հովհաննես Տեր-Մովսիսյանի, Շահվելու որդի Սարգսի հաշվեմատյանների, Նդիա Կարենցու գրազրույթումների մեջ («Նդիա Կարենցու Դիվանը», Երևան, 1968, էջ 322—325):

⁴⁶ Մատենադարան, ձեռ. № 6240, էջ 25ա:

Մեկ առ մեկ նշված են, թե քանի բեռ ապրանք է հանձնվում նրանց, յուրաքանչյուրը քանի հակ ապրանքով, ապրանքատեսակները, կշիռը («մին խակ բէկոսստ—բաշն ալ 13 (փութ) 30 (ֆունտ)», «մին բօւկայ լեղակ—10 (փութ) 10 ֆունտ», «մին սանդղ դոմէղ» և այլն): Անուհետև տրվում են խրատներ. մշտապես հետևել սալլերին, ղդուշ անցնել կամորջներով, Սաքատովում ապրանքը տեղավորել ապահով՝ քարե պահեստներում, և պահապաններ վարձել մինչև նավի վրա բարձելը, վստահ լինել, որ ջրի ներհոսքից նավը ապահով է, հետաքրքրվել և տեղեկանալ. եթե վոլգայում ավազակներից թալանվելու վտանգ կա, ապա 15 պահապան-զինվոր վերցնել, իսկ վտանգի բացակայության գեպքում՝ 12 զինվոր և այլն: Հանձնարարագիրն ավարտվում է այսպես. «Ձնի ճանապարհին ուր գրում անք՝ էնպէս շաւէք. որ դուք գիտէք, 2 խոզիդ էլ պոծանելիք շունէք. ամեն բանէրի վերայ լէվ մուղիաթ կէք, որ ամենայն ժամ մեր կումպանու գովաթէ խէրվէք: Ինշալայ, բարով սլամաթ Աշտարխան խասանելէ խալսրն էլ առունք, խաթիրջամվենք»⁴⁷: Այսքանից էլ երևում է, թե որքան կարևոր էր հանձնարարությունը հաջողությամբ կատարելը: Միաժամանակ, չի մոռացված գործակատարների ակնկալած, շահի հիշատակությունը՝ որպես անձնագործ ծառայության խայծ:

Շատ ավելի ծանր է եղել երիտասարդ ծառաների (տղա, նոքար) վիճակը: Եղբորը՝ Մանուկին, գրած նամակներից մեկում Հարությունը խոսում է Մըկըրտում, Նուրի և Հովսեփ անուններով տղաների մասին: Պարզվում է, որ ամեն մի զանցանքի համար ծեծելը սովորական է եղել: Հովսեփի կապակցությամբ Հարությունը գրում է. «որչափ սիրով խրատում ամ՝ շահ չե առնում, յեփ թաքում (այսինքն թակում, ծեծում) ամ՝ խօյ իրես ալ կանկրման» և այլն⁴⁸:

Լազարյանների գործունեության առաջին շրջանի մասին պահպանված աղբյուրներում տեղեկություններ չկան նրանց պատկանող արծաթագին ծառաների կամ ճորտերի մասին, սակայն ամենայն հավանականությամբ նրանք ևս, իրենց հայրենակից մյուս խոջաների նման, ունեցել են այդպիսի սպասավորներ⁴⁹: Սրանց աշխատանքը, սակայն, գերազանցապես օգտագործվել է մեծահարուստ վաճառականների տնային տնտեսության մեջ և քիչ դեպքերում՝ առևտրի ոլորտում:

XVIII դ. կեսերին Իրանի կենտրոնական իշխանության թուլացման հետ մեկտեղ, որի հետևանքով երկրում անիշխանությունն ու բռնություններն առանասելի չափեր էին ընդունում, Նոր Զուլայի հայ խոջայական ընտանիքներն իրենց կուտակած կապիտալները փրկելու և երկրից դուրս բերելու ելք էին փնտրում⁵⁰: Դրա հետևանքով սկսվում է ուժեղ արտահոսք. արտագաղթում էին բոլոր ուղղություններով: Բազմաթիվ ընտանիքներ բնակություն էին հաստատում Իրաքում (Բասրայում), Հնդկաստանում, Իտալիայում և, մասնավոր-

⁴⁷ Նույն տեղում, էջ 213:

⁴⁸ Նույն տեղում, էջ 77բ:

⁴⁹ Խոջա Պողոս Վելիջանյանի կտակի մեջ, օրինակ, ասված է, որ նա իր որդիներին ծառանդություն է թողնում «առևտուր, արծաթագին ծառայք, երիվարք, ջօրիք, ուղտք, ուխարք, կալվածք, այգիք, բնակարանք» և այլն, օրից հետո անվանապես հիշատակվում են նրա 6 արծաթագին ծառաները (Յարուսթիւն Տէր-Հովհաննես, նշվ. աշխ., էջ 132):

⁵⁰ Վ. Ա. Դիլլոյան, նշվ. աշխ., էջ 23—24:

ТОРГОВАЯ КОМПАНИЯ ЛАЗАРЕВЫХ В 40—50-ЫХ ГОДАХ XVIII ВЕКА

ШУШАНИК ХАЧИКЯН

Резюме

Видные представители армянского торгового капитала—купцы и промышленники из семьи Лазаревых, переселившиеся в середине XVIII в. из столицы Ирана Исфахана в Россию, сыграли большую роль в экономической жизни Ирана в первой половине XVIII в.

Члены торговой компании Лазаревых, особенно сыновья Назарета Лазаревича—Агазар, Манук и Арутюн, вместе с кредитованными ими купцами и многочисленными торговыми агентами развернули оживленную торговую деятельность в разных городах Ирана, Ирака, Индии, Голландии и России.